Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն

Ռիմա Գրիգորյան

Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, Չարենց թաղամաս, 4ա շենք, 36 բն.

Հեռ.՝ 094048899
Էլ. փոստ՝ rima.grigoryan.ysu@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Ատոմ Ջանջուղազյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ.

1. 2020 թվականի ընթացքում նախարարությունը տեղեկատվություն ստանալու քանի՞ հարցում է ստացել:

2. Դրանցից քանի՞սն են ստացվել էլեկտրոնային տարբերակով:

   2.1 Քանի՞սն են ստացվել էլ. փոստով և քանի՞սը՝ e-request.am միասնական տեղեկատվական հարթակի միջոցով:

3. Քանի՞սն են ստացվել թղթային տարբերակով:

4. Քանի՞ հարցում է ստացել նախարարությունը «ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր պաշտոնական էջին: Քանիսի՞ն է բավարարել:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում եմ ծանուցումն ուղարկել էլեկտրոնային տարբերակով վերոնշյալ էլ. փոստի հասցեին:

(Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Կանխավ շնորհակալ եմ,
Ռիմա Գրիգորյան
08.04.2021